

յելոց յետոյ՝ ուրիշ կերպ նայելն իրրե
յանցանք նկատի. բայց մենք առամ ենք,
երբ որ այդ ամուսիններից մէկը մի օտար
կնոջ կամ մարդու՝ այդ երիտասարդներից
մէկը իւր ազգականին նայում է «առ ի ցան-
կանալոյ նմասն իրաւունք պէտք է, ունինայ
իւր կրին անձնատուր լինել քակել արգեն-
եղած անքականի բարոյական կապը և մի նո-
րը հաստատել՝ որ ուրիշն այլ ևս բարոյական
լինել չի կարող մինչ մենք բարոյական պատկեր
ենք առաջին նորան՝ «սիրոյ, սրբազն անուան
ներքոյ ծածկելով և այդպէս բարոյականի ու
անքարոյականի գաղափարներն իրար հետ շփո-
թում: Առաքեալի ահաւ որ խօքերը (Ա. Կորնիժ.
Զ. 16) միտ չենք բերում մենք ամեններն, և ըս-
տեղծում ենք մի թշուառ բարոյականութիւն,
որի հայեացքները ժողովրդի այլ և այլ խաւերի
մէջ իտափանցելով՝ ողջախոչ աւանդութեան
ամրացրած բոլոր կապերը քակում: անձարձակ
ազատութիւն են շնորհում մարդոց ամենաըս-
տոր կրերին և ի՞նչ է հետեանքը: Հետեանքն
արգեն իսկ զարհուրելի է. բայց աւելի ևս
զարհուրելի պէտք է լինի ապաբայում: եթէ
շղթաստանանք, եթէ զանազան կեղծ ու պա-
տիր պատճառանքներով մեր զգայական ցանկու-
թիւնները շցիլուց և ինչ որ կարծեցեալ
ազատութեան փայլուն պատկերների ներքոյ
ծածկելուց շղագարենք. եթէ մեր ողջախոչ
նախնեաց առաքինութիւնը չփերականգնենք՝
ու աւետարանից բղիած ու գաղափարները մեր
բարոյական կեանքի ամենօրեայ անունզը զար-
ձնելով և պատրաստ գտնուելով ամէն բոլո՛
քրիստոնէական արիութեամբ խլելու մեր
սրաից ու արորելու սոտի տակ մեզ զայ-
թակղութիւն պատճառող զգացումներն ու
խորհուրդները:



ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ

ԱՂՔԱՏՆԵՐԻ ԽԵԱՄՄԱՏԵՐՈՒԹԵԱՆ ԳԱՐԴԱ.

Գ.

ԱՂՔԱՏՆԵՐԻ ԽԵԱՄՄԱՏԵՐՈՒԹԵԱՆ ԳԱՐԴԱ ԵՒՐՊԱՅՈՒՄ.

I.

ՆԵՐ ՎԻ ԱՎԱՐԱԿԵԼՈՒԹԻՒՆ և ՔՐԵԱԿԱՆ ՀԱՄԲԵ-
ՔԱՐԺՈՒԹԻՒՆ:

(Եարու ապաւրիւն)

Յիսունական թուականներից սկսած ներ-
քին առաքելութեան և ընդհանրապէս կին-
դանի քրիստոնէութեան գործը Եւրոպայում՝
հակայական յառաջազիմութիւններ է անում:
Թէ բողոքական և թէ կաթոլիկ եկեղեցիների
համար ներքին առաքելութիւնը եկեղեցական
կիանքի խոշոր գծերից մէկն է. նա այնքան
ընդպարձակ է, որ բոլոր հաստատութիւնների
և գործունեութիւնների մասին տեղեկութիւնն
ապաւ համար մի ամբողջ գիրք պէտք է զը-
րիլ: Համալարաններում գասախօսութիւններ
են կարգում ներքին առաքելութեան
մասին. գործնական աստուածաբանութեան
ձիւղերից մէկն է նա և հարուստ գիտնական
**գրտկանութիւն ունի: Մինչև իսկ առաջնոր-
դութեան համար ձեռնարկների կան գրուած,**
**և լաւագցններից մէկը յօդուածիս ընթաց-
քում յիշուած Ծիփերի գիրքն է:**

Ներքին առաքելութեան ձիւղեր կան
դիրմանիայի բոլոր նշանաւոր քաղաքներում:
իւրաքանչիւր նահանգական քաղաք ներքին ա-
ռաքելութեան հաստատութիւնների և գոր-
ծունեութեան կեղրան է, անկախ միւնքներից:
Բայց այդ անկախ ընկերութիւնները միացած
են բարոյական սերտ կապերով՝ որոնց մասին
յիշեցինք նախընթաց հաստածի մէջ: Նշանա-
ւոր հաստատութիւններ կան և կեդրոնական
**մեծ քաղաքներից հեռու, ինչպէս Բիլեֆել-
դի մօտ եղած նշանաւոր հաստատութիւննե-
րը՝ պատճոր քոն Բագելցինդի տեսչութեամբ**
և Ներնշաներ գիւղինը՝ Հարց լեռներում: Բայց
մեծ քաղաքներին յատուկ են քաղաքային

առաքելութիւնները—Stadtmission, որովհետեւ այդ հաստատութեան ծագումն ու կարեռութիւնը քաղաքների կեանքի հետ է կապուած:

Ներբին առաքելութեան գործունեւութիւնը և նորա սահմանի մէջ մտած հաստատութիւնները շատ ընդարձակ են: Մենք յիշեցինք միայն մի քանիսը, որոնք աղքատների խնամատարութեան հետ համեմատարար աւելի սերտ առընդութիւն ունին:

Առաջին կարգի հաստատութիւնները խնամատարութեան հետ առանձնապես կը թութեան վերայ են ու շագրութիւն գարձում: Այդ կարգի հաստատութիւններն են մուռը կոչուածը և փոքրիկ երեխանների գլուխները կամ մանկապարտէզները, բայց ոչ Պրեօրելի մաքով, առաջնում ընդունուում են ծծերները, իսկ երկրորդում՝ 3—6 տարեկան երեխաները, որոնց ծնողները աղքատութեան պատճառով սահպուած են գործարանում աշխատել ընտանիքի միւս անդամների պարէնը հայթայթելու համար: Այս կարգին են պատկանուած նաև կիրակնօրեայ դպրոցները մանուկների համար, որոնք կրօնական գիտելիքների մէջ են վարժեցնում որբանոցները, երեխաններին ձեռքի աշխատանքի վարժեցնելու դպրոցները, իսկ աղջիկների համար կարութեան մեջ և աղախնութեան արհեստը սովորեցնելու հիմնորդութիւնները: Այս բոլոր հաստատութիւնները աղքատ զասակորդին նիւթական և բարյական օգնութիւն հասցնելու համար են հիմնուած: Ասպազանոցներից առանձին ու շագրութեան արժանի են աղախնուների, ուսնուորութիւնների և կիրակնօրեայ ընկերութիւնները: Այս հաստատութիւնների նպատակն է պահուած աղախնուներին բանուսրութիւններին և կամ համեմատարար աւելի բարձր զասին պատկանող՝ բայց չքաւար, օրիորդներին, որոնք մեծ քաղաքներն են դաշիս մի կարու հաց վաստակելու, ապահով յարկի տակ առնել՝ բարյական և ուրիշ փորձութիւնների գէմ: Կեանքի պայմանները Եւրոպայում ուրիշ են, քան մեր երկրում: աղքատ զասակարդի մէջ ընդհանուր սովորութիւն է, որ չափահաս աղջիկը պէտք է, անձամբ վաստակէ իւր հացը: Բայց հայրենի քաղաքի կամ

դիւզի մէջ ամէնքը չեն կարող անում գործ գոնել, ուստի պանդիստում են քաղաքները, ուր աշխատող ուժերի աւելի մեծ կարիք կայ: Բոլոր մեծ քաղաքները գիտութեան, առաւեսաի և քաղաքակրթութեան կերպները լինելուց զատ՝ ապարարդարար անբարոյականութեան կեցաններ ել են: Քաղաք եկող անփորձ և երիտասարդ աղջիկներին բարյարկան վասնկներից աղատելու համար հիմնուած են այս հաստատութիւնները: Սիւներին կազմը յայտարարութիւններով և ուրիշ մէջոցներով աղջիկներին ասպանջանոց են հրաւիրում, այստեղ թէ սենեակի վարձը և թէ մունզը համեմատարար աւելի էման է, քան ուրիշ տեղերի: Հաստատութիւնը մի տեսակ ընտանիք է զառնուում այդպիսինների համար, որի անմիջական զեկավարները՝ սորկաւագութիւնները և նոցա օգնական ուրիշ կրթուած կանայք, պանդուխանների համար ճշմարիտ բարեկամութիւններ են և մայրեր: Հաստատութեան վարչութիւնը յաճախ ինքն է կարողանուում նոցա համար գործ գտնել: Խսկ գործ ունեցող և պանդուխա բանուուրութիւնները կամ խանութիւններում վաճառ ողները կամ կամ կամ օգնութիւններում վաճառ ողները ընկերական զուարձութիւններ են գտնուում ոյն իսկ հաստատութեան մէջ, երբեմն երաժշտական երեկոյթներ կամ պարահանդէններ կամ կազմելով: Խւրաքանչիւր շարաթ պաստոր կամ մի ուրիշ կարու անձնաւորութիւն գաստիսութիւն կամ քարոզ է խօսում նրանց համար: Ազատ ժամերում կարոզ են ձրի ձեռագործութիւն, երաժշտութիւն, անաւեսութիւն ուսանել: Հաստատութիւնների կամ կիրակնօրեայ ընկերութիւնները միջոց են տափս աղախնուներին և վաճառող օրիորդներին կիրակին վայելու և կերպով անհելու: Ազատինները երկու շարաթը մի անդամ կիրակի օրերը ձաշից յետոյ աղատ են ծառայութիւնից: Շատ անգամ այդ աղատութիւնը նոցա բարյական կորսական առիթն է զառնուում՝ հասարակաց պարահանդէններ և զուարձութեան տեղեր յաճախիւրուց: Սոյն վասնզին են ենթարկուած և խանութներում ծառայող օրիորդները: Այս ցաւին գարման տանելու համար կազմուում են ընկերութիւնները սորկաւագութիւնների կամ

բարեպաշտ տիկնանց զեկավարութեամբ, որոնք աշխատում են այդ ազատ ժամանակը սուրբ օրուան վայել անցկացնել։ Օգտակար խօսակցութիւնն գասահօսութիւն կամ քարոզ, եւ ածշտութիւն և երգ, խմբով զրօսանք՝ միջոցներ են այդ նպատակի համար։

Բայց ինչպէս երիտասարդ իգական սեռի համար հասաւառութիւններ կան այնպէս և արական սեռի համար՝ օրինակ երիտասարդների և երիտասարդ վաճառականների և աշկերտների ընկերութիւնները։ Առաջինը սոցանից ամենակարեղը և ամենասարածուածն է։ Երիտասարդների ընկերութիւնները — Junglingsvereine — սկիզբն են առել Գերմանիայում և այնաեղից տարածուել են ամբողջ Եւրոպյում և Ամերիկայում՝ փոքր ինչ փոփոխութեան ենթարկուելով։ Այս հասաւառութիւնը գոյութիւն ունի և կաթոլիկների մէջ, որ Gesellenverein է կօչըում, որի նպատակն է պանդուխտ և ընտանիքից դուրս ելած պատահներին և երիտասարդներին քրիստոնէական բարոյական կեանքի մէջ հասաւառ պահել, մի և նոյն ժամանակ զիւրութիւններ տալով մտուոր և հոգեսր կրթութեան մէջ յառաջազիմելու։ Սովորաբար ընկերութեան անդամ կարող է լինել իւրաքանչիւր երիտասարդ 18 տարեկանից վեր, բայց կարող են և աւելի փոքրները մասնակցել եթէ նրանց համար առանձին ընկերութիւն չկայ։ Խերաքանչիւր անդամ ամսական վճարում է 12—25 կոպէկ։ Ընկերութիւնն ունի իւր յատուկ մատենագրանքը ստունում է երիտասարդների կրթութեան համազատասախան թերթեր, ցանկացողներին ձրիաբար օտար լեզուներ հաշուապահութիւն, երածշտութիւն և երգեցողութիւն են սովորեցնում երեկոյեան ազատ ժամերին։ Շարաթը երկու անդամ զեկավարող պատառը կամ նորա օգնականը կրօնական բովանդակութեամբ զրցյաներ է անում կամ Աստուածաշնչի մի հասուածը բացարում։ Պասահօսութիւններ են լինում և ուրիշ օգտակար նիւթերի մասին։ Տօներին խմբով զրօսանքի են գնում, իսկ հանդէաներին մասնակցում են ազգականները կամ ծննդները։ Ընկերութիւնն ունի իւր անդամներից կազմած յատուկ երածշտական և եղզացիկ խումբ։

Մասն հաստատութիւններ են երիտասարդ վաճառականների և արհեստառոր աշկերտները։

Ուկ բանու որների և աղքատ արհեստառորների համար հիմնուած են բանուորների ապալնշանոցները (Herberge zur Heimat), բանու որների գաղութներ (Arbeiterkolonie) և Arbeiterheim կոչուած հասաւառութիւնները։ Բանու որների և հասարակ արհեստառորները յաճախ քաղաք են անցնուում նոր գործ զանելու համար՝ մանուանդ տարուայ որոշ եզանակներում։ Առաջնօքա իջեանում էին հասարակ պանդոկներուում որնք մի և նոյն ժամանակ անբարոյականութեան և արքեցութեան որջեր էին։ Այդ չորեաց առաջն առնելու համար քահանաների և բարեպաշտ մարդկանց աշխատութեամբ շինուած են այժմ կենդանի երթեւեկութեան կեղրուներում 400-ից աւելի պանդոկներ։ ուր բանու որները շատ էժան սենեակ և սնունդ են ստանում։ Այսակ արգելուած է ոգելից խիստ խմիչքներ գործածելը, յատկապէս օգիի վատ տեսակը, որ բանու որների մահացութշնամին է, արգելուած է նոյն խիգարեջրի չափաւորութիւնից աւելի խմելը։ Բանու որը պէտք է անպատճառ վճարէ նշանակուած նշին փարձը, իսկ չունեցած գեղքում մաշխատում է, մի քանի ժամ հասաւառութեան համար։ Սովորաբար վայա են կարել ատլիս։ Այս հասաւառութիւնը բանու որների համար ծշմարիտ բարիք է, այս տեսակ բոլոր ասպնջանոցների վարչութիւնները իրենց նահանգական և ընդհանուր ժողովներու ունին։

Բանու որների համար կարեսր հասաւառութիւն է և բանուորների զաղութը որ ժամանակաւ որապէս նոցա տունը և հայրենիքն է զանուում, մինչեւ նորից զործ գտնեն։ Անզործ բանու որը որ ուտելու հաց չունի, մուրացկանութիւնն էլ արգելուած է՝ ընդունելութիւն է զանուում այս հասաւառութեան մէջ, ուր նորան զործ և թեթև փարձատրութիւն են տալիս բնակարանի և սննդներան հետ։ Դորանով աղքատ բանու որը ժամանակ է, զանուում գրագրութիւն սիսել գործ զանելու համար։ Կամ հասաւառութիւնը ինքն է հոգում այդ բանիը՝ յարաբերութիւն ունե-

նալով բազմաթիւ գործարանների հետ։ Այս գործի նախաձեռնութիւնը պատկանում է պատառք ֆոն Բոդելցվինգին՝ որ մինհարի որդի լինելով հանգերձ քաշանայ է, զարձել և իւր աշխատութեամբ կարողացել է Գերմանիայի ամենաշատաւոր բար։ Հաստատութիւններն ստեղծել բազմատեսակ ճիւղաւորութիւններով։ * Սա ճահճների և անբերրի հոգերի մեծ տարածութիւն է գնել Վեստֆալիայում իւր հաստատութիւնների համար, այդտեղ է աշխատեցնում գաղութում ապաստանող բանութերին՝ ցամաքեցնելով ճահճները և պարարտացնելով անբերրի հոգերը։

Բանուորների վիճակը թեթեացնելու միշտ կարեոր հաստատութիւն է նոյնական և Arbeiterheim կոչուածը, որի մեջ գարձեալ յիշեալ պատորը մեծ մասնակցութիւն ունի։ Հաստատութեան վարչութիւնը պարտքով և նուիրաբերութիւններով գործարանական քաղաքների արջականերում հոգեր է գնում և փոքրիկ աներ շնորհում բանուորների անտեսութեան համապատասխան։ Խրաքանչիւր անակ իւր բանջարանոցն ունի և գոմը, ուր տան տերը մեկ կամ երկու խոզ կամ կով պահել կարող է։ Բանուորը պայմանաւորում է տասը կամ տասներկու տարուայ ընթացքում վճարել ծախօը և թեթե տոկոս, որից յետոյ շնորհիւնը բանուորի սեպհականութիւն է, դառնում։ Այս հանգամանքը շատ ձեռնուոր է բանուորի համար։ առանց այն էլ նա պէտք է տան վարձ վճարելու բայց այժմ նորա վճարը դրամագլուխ է, դառնում հետզհետեւ, և մի քանի տարուց յետոյ նա արգեն սեպհականատեր է։

Նորքին առաքելութեան հետ են կապուած և արբեցութեան և անտակութեան գեմ մաքառող հաստատութիւնները, բանտարկեանների և նոցա ընտանիքի խնամատարութիւնը, աշխատանքի անընդունակ և թոյլ պառաւների և ծերունների ապաստանարանները, խուլերի և համրների, հաշմանդամների, կըրերի, ապուշների և հոգեկան հիւանդների հաստատութիւնները, ինչպէս և հիւանդա-

նոցները՝ իրենց բազմաթիւ ճիւղաւորութիւններով։

Որպէս զի մի գաղափար տուած լինիք վերջին անսակ հաստատութիւնների մասին, մի քանի խօսքով կնկարագրենք պատառք ֆոն Բոդելցվինի անաշութեան տակ եղած հաստատութիւնները, ուր երկու ամիս ծառայել ենք՝ գործնականապէս ծանօթանալու համար։ Այդ հաստատութիւնները գտնեւում են Վեստֆալիայի Բիլեֆելդ քաղաքի մօտ Տետորութեան անտառի մէջ։ Մեր այնաեղ եղած ժամանակ (1894 թ.) նոքա 135 առանձին բաժանմունքներից են բաղկացած և տարեկան երկու միլիոն մարկ ծախս ունին, որի մի մասը կածաւար նույիրաբերութիւններից էր հաւաքւում։ Ներքին առաքելութեան հաստատութիւնների համարեարուր անսակները կան այնտեղ, բայց զինաւոր հաստատութիւններն են ընկնաւորների (Epileptiker) հիւանդանոցը 2400 մահճակալով, եղրայրանոցը (Brüderhaus) 500 և սարիաւագու հինների հաստատութիւնը (Diakonissenhaus) 600 անգամներով։ Վերջին երկու հաստատութիւններում հիւանդապահներ և ընդհանուրապէս ներքին առաքելութեան պաշտօնեաններ են կրթուում։ Վերաբեսուչ պատարին օգնում են և ուրիշ հինգ պատարիներ, այլ և կառավարութեան կողմից խրաքանչիւր տարի աստուածաբանութեան մի քանի կանգինատաններ են ուղարկուում այնահետ գործնականապէս վարժուելու ներքին առաքելութեան գործի մէջ։ Աւետարանական ծշմարիտ հոգի և զարմանալի կարգ ու կանոն է տիրում այստեղ։ Խնամք և սէր են վայելում այնպիսի հիւանդներ որոնց վերայ մենք զգուանքից նայել անգամ չենք կարող։ Բոլոր եղրայրները ձաշում քնում են իրենց հիւանդների հետ։ աղօթում են նոցա հետ և հոգեպէս միխիթարուում։ Կարողները ամենայն կիւրակի եկեղեցի են գնում, անկարողների համար հիւանդանոցների կեղրուում շնորհ մատուուի մէջ ժամերգութիւն է լինում։ Նրանց ևս հոգեոր մըխիթարութիւնից անմասն շանելու համար։ Հաշմանդամներն ու ընկնաւորները իրանց կարողութեան չափ զրադառնուք ունին, արհեստի բոլոր անսակները կան այնտեղ և ա-

* Տես. Արարաւ 1894, եր. 182:

մեն մի հիւանդ վարպետի օդնութեամբ իւր արհեստի համեմատ գերձակութիւն, հիւանութիւն է անում: Արհեստ շիմացողները աշխատում են ծաղկանոցներում և բանջարանոցներում կամ ազիւսի գործարաններում: Որ նոյն հասաւասութեանն են պատկանում: Ամառը բոլոր կարողները մասնակից են գաշտային պարապմունքներին:

Նրանց զբաղեցնում են ոչ իլէ շահադիասկան նպասակներով, այլ բարոյական և բժշկական տեսակէաններով: Այսակը մինչեւ իսկ խստութեամբ պահպանուում է այն սկզբունքը, թէ ծուլութիւնը քրիստոնեայի համար մեղք է: Ոչ ոք նրանց չէ սախպում աշխատել երբ նրանք անկարող են, բայց ձանձրոյթի տանջանքներ էլ չափէաք է ունենան ծուլութիւնից, երբ փոքր ինչ աշխատել կարող են, իսկ թէ շարժումը և մաքուր օդը բժշկականութեան էական մէջոց է՝ անկարոա և բացարութեան: — Այսպիսով տեսնում ենք, որ ներկայ դարու բարեգործութեան մէջ ես նիւթական օգնութիւնը կապուած է, գաստիարակութեան և աշխատանքի գաղափարի հետ ինչպէս քրիստոնեութեան նախին զարդում:

(Կը շարութեակուի)

Դ. Վ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՒՆԵՐԻ.

ԿԱԹՈԼԻԿԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՅԻ.

Խնչպէս յայտնի է բանուոր գասակարգը վերջին ժամանակ մեծ խոսքութիւններ հանեց Խոտալիայում կառավարութեան գէմ, այնպէս որ հարկ եղաւ գրեթէ ամրող բանակը ոսքի կանգնեցնել և զէնքի գործութեամբ խաղաղեցնել ապստամբներին: Առանձին հետաքրքրութեան առարկայ է ներկայացնում կաթոլիկ եկեղեցեւոյ բոնած դիբըն այս դէպքում՝ իւր հետեւանքներով:

Խռովութեան զիմանոր կեդրօններից մէկն էր Միլան քաղաքը, որի աբբեապիսկոպոս կարդինալ Արքարքին յայտնի է վաղուց իրու կաղապի աշխատանքներում: Այսպիսի յայտնի թշնամական ցոյցեր չեր անում: Իւր կառու կաղապի աշխատանքների վեցը կամապարհին իշխանութեան մէջ առաջարկութեամբ ոյժ էր տալիս խոսքութեանը: Ծառ սակաւ էին

երբ ապստամբներն արդէն պատնէշներ կանգնեցրել ու կռուի մէջ էին՝ աբբեապիսկոպոսը թողեց շառապաւ քաղաքը և իրու թէ իւր թեմն այցելելու ելաւ: Խնականաբար ամէնքը հաւատացած են, որ նա չէր կամենում քաղաքում մնալով ապստամբների հակառակ քարոզել և յօյս ունէր, որ յեղափոխութիւնը թագաւորական գահը շարժելու ինպատէ և պապական իշխանութիւնը փերականգնելու համար ճանապարհ կհարթէ: Քաղաքից եկած գժիրազդ լուրերը չլսելու էր տալիս նա մինչեւ որ պետ զօրբը զրաւեց կապուցինների մի վանք, ուր ապստամբներն ապաստանարան էին գտել, և կալանաւորեց ու խուզարկեց կրօնաւորներին: Այդ ժամանակ նա նամակ գրեց նահանգապետ գեներալ Քավային խնդրելով արձակիել կալանաւորուածներին, և ստացաւ մի շատ կտրուկ պատասխան: Որի մէջ գեներալը ցաւ էր յայտնում՝ Մեծն Ամբրոսիոսի յաջորդին այդպիսի գժուարին հանգամանքներում իւր ամսուից հեռացած տեսնելով փոխանակ իւր բոլոր ստորագրեալ հոգեորականների հետ մէկտեղ աջակցելու կառավարութեան, որ եղայրասպան կուռին վերջ դնեն: Աբբեապիսկոպոսի գէմ խիստ զայրացած է նաև նորա թեմի ժողովուրդը: Պապը նորա հասցէին ուղղած մի նամակի մէջ խոր զըժգութիւն է յայտնում վտանգի ժամին քաղաքից հեռանալուն համար, այնուամենայնիւ իւր թեմի տակն է առնում նորան, և առ հասարակ եռանգով պաշտպանում է եկեղեցականներին՝ նոցու գերայ բարգուած մեղադրանքների գէմ: Գերբարքն այժմ Հռոմում է, և շատերը հնմագրում են, որ պապը խոհեմութեամբ մոքերը խաղաղեցնելու համար նորա իւր ամսուից կհեռացնէ: Արդէն ձերբակալուած է և ամօմտով բանտը տարուած նորա աջ բազուկ Դռն Ալբերտարիո քահանան: Osservatore Cattolico թերթի տիրահոչչակ խմբագիրը, որ խոսվութիւնից մի օր առաջ խիստ կծու մեղադրական յօդուածներ էր հրատարակիել և ապա փախիել: Թերթը հարկադարձարեցրած է: — Թէ ինչպիսի տրամադրութիւն է իշխում եկեղեցականներից շատերի մէջ՝ օրինակ կարող է համարուել Մեսոպիսա անունով մի քահանայ, որ Ֆենովյայի ճանապարհին զինուորների մի խմբի հետ մրանալով՝ գտատարուում էր ամէն կերպ կառավարութեան ընթացքը, բոլոր շարեաց պատճառ թագ: իշխանութիւնը համարում: յարդորում ապստամբների վերայ հրացան շարձակիել, և երբ ձերբակալեցին նորան, բացականչում էր: Վեսուեցէք միշտ պապի աշխարհական իշխանութեան համար: Կեցցէ պապ—արքան: Կեցցէ համայնական յեղափոխութիւնը: — Յամենայն գէպս եկեղեցականների մեծամասնութիւնը, եթէ և այսպիսի յայտնի թշնամական ցոյցեր չեր անում: Իւր կառու կաղապի աշխատանքներում անտարբերութեամբ ոյժ էր տալիս խոսքութեանը: Ծառ սակաւ էին